**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ N 52 h**

ք. Երևան 15.07.2026թ

**ՍՐԲՈՒՀԻ ՌԱՖԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ (ՌԵԿՏՈՐԻ) ՊԱՇՏՈՆՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Որոշման իրավական հիմքեր՝**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 108.1 հոդվածի 3-րդ մաս, 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 122-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետ, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մաս, 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 27-րդ հոդվածի 2-րդ մաս, 3-րդ մասի 1-ին կետ, 5-րդ մաս, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կանոնադրության 41-րդ կետի 2-րդ ենթակետ, 54-րդ կետի 1-ին, 2-րդ, 6-րդ ենթակետեր, 57-րդ կետ,

**Որոշման փաստական հիմքեր՝**

Սույն որոշման կայացման համար հիմք են հանդիսացել թիվ 62220625 քրեական վարույթի ամբողջական նյութերը, այդ թվում՝ բայց չսահմանափակվելով 24.02.26թ. տուժող ճանաչելու մասին որոշումը, 02.03.26թ. մեղադրական եզրակացությունը, վկաների ցուցմունքները, մեղադրյալների ցուցմունքները, գործում առկա բոլոր ապացույցները, Հիմնադրամի աշխատողների կողմից իրենց վերագրվող փաստերը ընունելու, Հիմնադրամում կանխիկ դրամաշրջանառություն իրականացնելու, ֆինանսական միջոցները ոչ պատշաճ կառավարելու և դրա հետևանքով Հիմնդարամին վնաս պատճառելու հանգամանքները:

Ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմերով և հիմք ընդունելով նշված փաստական հիմքերը՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը 2026 թվականի հուլիսի 10-ի հարցման կարգով նիստի քվեարկության արդյունքներով (կողմ՝ 12, դեմ՝0, ձեռնպահ՝1) **որոշում է՝**

1. 2026թ. հուլիսի 15-ից դադարեցնել «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) պաշտոնում Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանի լիազորությունները՝ լուծելով նրա հետ 2022 թվականի մարտի 19-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**